ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.10.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 98/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) 09.09.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-98/16 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պատական հիմնարկի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.09.2016թ. գրությունը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), ինչպես նաև ԳԲԽ-98/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.09.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

«Խաչատրուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 09.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար՝ Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին և ըստ գնահատող հանձնաժողովի որոշման՝ զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ առաջին տեղը զբաղեցրել է «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ն:

Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովից պահանջել է «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի, գնային առաջարկի և որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերի պատճենները: Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից Ընկերությանը ներկայացրած պահանջված փաստաթղթերի պատճենները, պարզվել է, որ «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փասթաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, տուժանքի մասին համաձայնագիրը և վաճարման պահանջագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այսինքն՝ պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի վրա, իսկ Ընկերության կողմից ներկայացրած հայտի փաստաղթերը պատճենահանելու դեպքում հստակ արտացոլվում է էլեկտրոնային թվային ստորագրությունը: Եթե փաստաթղթի վրա չի արտացոլվում էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա փաստաթուղթը օրինական ուժ չունի: Ելենլով վերոհիշյալից՝ գտնում է, որ «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի բավարարում հրավերով սահմանված 7.9 կետի պահանջները:

Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնհատող հանձնաժողովի կողմից՝

«ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը,

«ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,

«ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

«ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի հետ պայմանգիր կնքելու մասին որոշումը,

մերժել «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի հայտը:

Որպես իրավական հիմք նշել է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 35-րդ կետի 9 ենթակետով նախատեսված, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով հրավերի պահանջները:

Ընկերությունը 23.09.2016թ. ներկայացրել է բողոքի լրացում, որով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է: Խնդրել է համապատասխան հարցում կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ և դրական պատասխան ստանալու

դեպքում դադարեցնել գնահատող հանձնաժողովի Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

29.09.2016թ. մեկ այլ գրությամբ Ընկերությունը խնդրել է ի լրումն 09.09.2016թ. բողոքի, 23.09.2016թ. ներկայացրած բողոքը՝ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու պահանջի մասով թողնել առանց քննության և քննարկել միայն 09.09.2016թ. բողոքով ներկայացված պահանջները:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

Պատվիրատուն 20.09.2016թ. գրություն է ներկայացրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ, որով հայտնել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն բողոքով պնդում է, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնման գործընթացի.

ա) հաղթող ճանաչված մասնակցի՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտում առկա փաստաթղթերը (այդ թվում՝ գնի առաջարկը, հայտի ապահովումը՝ տուժանքը և տուժանքին կից վճարման պահանջագիրը) հաստատված չեն այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

բ) Պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի (թղթերի) վրա:

Պատվիրատուն գտնում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ա) կետի մասով «Ագարակ» ԲԲԸ-ի հայտում առկա փաստաթղթերը հաստատված են այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապացույց՝ նշված ապացույցները գտնվում են էլեկտրոնային գնումների համակարգում՝ armeps.am կայքում, որոնք ստուգվել են բողոքը քննող հանձնաժողովի կողմից 16.09.2016թ. նիստի ընթացքում՝ պատվիրատուի ներկայացուցչի ներկայացմամբ և ներկայությամբ:

Բողոքը քննող հանձնաժողովը համոզվել է, որ վերոհիշյալ փաստաթղթերը հաստատված են այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ստուգումը կարելի է կրկնել ցանկացած ժամանակ:

բ) կետի մասով՝ ընդհանրապես հասկանալի չէ ձևակերպումը, էլեկտրոնային գնումների դեպքում՝ ներկայացված փաստաթղթերը գնահատվում են էլեկտրոնային գնումների համակարգում՝ armeps.am կայքում: Էլեկտրոնային գնումների կարգավորման որևէ փաստաթղթով (գնման գործընթացի հրավերով ևս) սահմանված չէ որ էլեկտրոնային միջոցներով (armeps.am կայքով) ներկայացված փաստաթղթի գնահատման համար պետք է գնահատել նաև փաստաթղթի պատճենահանված թղթային տարբերակը:

Ելնելով վերոգրյալից գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>3. ԳԲԽ98/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը խորհրդին է ներկայացրել իր 26.09.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 09.09.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

<u>4. ԳԲԽ98/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-98/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Ագարակ» ԲԲԸ-ն:

2. Գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. N 3 արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է դիմել լիազոր մարմին և ստանալ պարզաբանում, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը) և կից վճարման պահանջագիրը ներկայացված են եղել մեկ PDF

փաստաթղթով և էլեկտրոնային թվային ստորագրություն առկա է միայն տուժանքի համաձայնագրի էջում:

3. Հանձնաժողովի գրությանն ի պատասխան 24.08.2016թ. թիվ 1/73-1/20829-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ սահմանված կարգով էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված մեկ PDF ֆայլում ներառված բոլոր փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված:

4. 27.09.2016թ. «Այունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված գրության համաձայն՝ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրություններով:

5. 05.10.2016թ. «Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ՓԲԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ կից ներկայացված թվով երկու «PDF» տեսակի ֆայլերի, սույնով հաստատում ենք, որ տվյալ փաստաթղթերը ստորագրված են Կարապետ Բարսեղյանի (ՀԾՀ 2010520432) վավեր թվային էլեկտրոնային ստորագրությամբ և հանդիսանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված:

<u>5. Խորհրդի հիմնավորումները եվ եզրահանգումը</u>

Գնումների բողոքարկման խորհրդի բողոքը քննող հանձնաժողովի 29.09.2016թ. կայացած նիստով հնարավոր չի եղել որոշում կայացնել, քանի որ հանձնաժողովի երեք անդամներից նիստին ներկա են գտնվել երկուսը, իսկ քվեարկության արդյունքում հանձնաժողովի անդամների ձայները բաժանվել են, այդ իսկ պատճառով որոշում է կայացվել նիստը հետաձգելու, ինչպես նաև՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով «Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ՓԲԸ համապատասխան հարցում ուղարկելու մասին:

Խորհուրդը բողոքն ուսումնասիրելով պատշաճ մանրամասնությամբ, բողոքում առկա փաստաթղթերը և ապացույցները գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց

համակցությամբ՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար բավարարության տեսանկյունից գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-ն որոշման 35-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների իրավական ռեժիմը և վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման գործարքի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը՝ պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական բանկը, վճարահաշվարկային համակարգի գործունեության սահունությունն ապահովելու նպատակով, կարող է սահմանել վճարման հանձնարարականների, դրանք չեղյալ համարելու հանձնարարականների և տեղեկացումների վավերապայմանները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդը 20.05.2004 թվականի թիվ 131-ն որոշմամբ սահմանել է վճարահաշվարկային գործառույթների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները:

Վերը նշված որոշման համաձայն՝ որոշման հավելվածի 15-րդ կետի աղյուսակի առաջին սյունակում նշված վճարահաշվարկային փաստաթղթերում պարտադիր պետք է

առկա լինեն աղյուսակի երկրորդ սյունակում նշված վավերապայմանները, որոնք ենթակա են պարտադիր լրացման այն դեպքում, երբ աղյուսակի երրորդ սյունակում նշված է «պարտադիր» բառը:

Վճարահաշվարկային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները

3. Վճարման պահանջագիր	3.1 պահանջագրի համարը	պարտադիր
	3.2 ներկայացման ամսաթիվը	պարտադիր
	3.3 վճարողի անունը կամ անվանումը	պարտադիր
	3.4 վճարողի բանկի (մասնաճյուղի) անվանումը	պարտադիր
	3.5 դեբետագրվող հաշիվ (վճարողի հաշվի համարը վճարողի բանկում (մասնաճյուղում)	պարտադիր
	3.6 շահառուի անունը կամ անվանումը	պարտադիր
	3.7 շահառուի բանկի անվանումը	պարտադիր
	3.8 կրեդիտագրվող հաշիվ (շահառուի հաշվի համարը շահառուի բանկում (մասնաճյուղում))	պարտադիր
	3.9 գումարը (բառերով, թվերով)	պարտադիր
	3.10 արժույթը (կոդով և բառերով)	պարտադիր
	3.11 գործարքի նպատակը	պարտադիր
	3.12 փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	ոչ պարտադիր
	3.13 պայմանագրի (պատվերի) համարը, ամսաթիվը	պարտադիր
	3.14 առդիր _____ էջ	ոչ պարտադիր
	3.15 շահառուի և վճարողի ստորագրությունները և վավերացումները	պարտադիր
	3.16 շահառուի և վճարողի բանկերի	պարտադիր

	(մասնաճյուղերի) կատարման ամսաթվերը, ստորագրությունները և վավերացումները	
	3.17 հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ	պարտադիր (պետական բյուջե կատարվող հարկային և այլ պարտադիր վճարումների կատարման դեպքում)
	3.18 սոցիալական ապահովության քարտի համարը	պարտադիր («Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով սահմանված դեպքերում)

Խորհուրդը գտնում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությունով:

Այսպես՝

armeps.am էլեկտրոնային գնումների համակակարգը սպասարկող «Այունեթվորքս» ՍՊԸ-ն 27.09.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի վրա բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. N 3 արձանագրության համաձայն՝ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին «Ագարակ» ԲԲԸ-ն մեկ PDF փաստաթղթով (մեկ ֆայլով) ներկայացրել է տուժանքի համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, որում փաստաթղթի հաստատման համար հրավերով պահանջվող մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությունն առկա է միայն տուժանքի համաձայնագրի էջում:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար Մ.Քյուրկչյանի 15.08.16 թվականի ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարին հասցեագրված գրությամբ խնդրել է տալ պարզաբանում, թե արդյոք կարելի է ենթադրել, որ վճարման հանձնարարականը հաստատված է այն ներկայացնողի կողմից:

Վերը նշված արձանագրության և գրության առկայության պայմաններում Խորհուրդը գտնում է, որ պատվիրատուն արձանագրելով վճարման պահանջագրի վրա ստորագրության բացակայությունը, դիմել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարին վերը նշված փաստաթղթի գնահատման մասով պարզաբանում ստանալու համար:

Վերը նշված գրությանն ի պատասխան 24.08.2016թ. թիվ 1/73-1/20829-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարը հայտնել է, որ սահմանված կարգով էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված՝ մեկ PDF ֆայլում ներառված բոլոր փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված:

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի՝ 24.08.2016թ. թիվ 1/73-1/20829-16 գրության կապակցությամբ Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարն իրավասու չէ պարզաբանում տալ վերը նշված հարցի վերաբերյալ, իսկ վերջինիս կողմից տրամադրված գրությունը չի կարող հանդիսանալ պարզաբանում հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք

իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ կարող են տալ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 20.05.2004՝ թվականի թիվ 131-Ն որոշումը հանդիսանում է նորմատիվ իրավական ակտ, քանի որ դրանում արտացոլված են իրավական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները, հետևաբար միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կարող է պարզաբանում տալ իր կողմից ընդունված որոշման կիրառման բնագավառում ծագած հարցերի վերաբերյալ:

Սույն գործով Խորհուրդը «Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված գրությունը որպես ապացույց գնահատելիս անհարաժեշտ է համարում անդրադառնալ դրա ոչ միայն ընթացակարգային, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու հանգամանքին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում

և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Վերը նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից հստակ երևում է, որ օրենսդիրը սահմանել է որոշակի ժամկետ, որի ընթացքում խորհուրդը պետք է ապահովի բողոքի վերաբերյալ որոշման կայացումը:

Օրենսդիրի կողմից ժամկետի սահմանումն ինքնանպատակ չէ և կրում է պարտադիր (իմպերատիվ) բնույթ:

Վերը նշված իրավական նորմի տրամաբանությունից հետևում է, որ բողոքարկման խորհուրդը որոշման կայացման համար անհրաժեշտ գործողությունները՝ բողոքի ուսումնասիրությունը, կողմերին լսելը, ներկայացված փաստաթղթերի (ապացույցների), ՀՀ ԿԱ ԳԱԿ-ի կողմից տրամադրված եզրակացության ուսումնասիրությունը, պետք է իրականացնի քսան օրացուցային օրվա ընթացքում:

Օրենքով սահմանված քսան օրացուցային օրվա ժամկետում որոշակի գործողություններ կատարելու պարտականությունը վերաբերում է նաև բողոքի քննարկմանը ներգրավված կողմերին: Այսինքն՝ բողոքի քննարկմանը ներգրավված կողմերը բողոքի վերաբերյալ իրենց պահանջները կամ առարկությունները հիմնավորող ապացույցները պարտավոր են ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում:

ՀՀ սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Հիշյալ նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ օրենքի խախտմամաբ ձեռք բերված ապացույցները չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունը կամ բացակայությունը ապացուցելու առումով:

«Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված գրությունը սույն գործով չի կարող ապացուցողական նշանակություն ունենալ, քանի որ այն ձեռք է բերվել օրենքի խախտմամբ, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քսան օրացուցային օրվա ժամկետից հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով, 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 09.09.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 29.08.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարելու, 02.09.2016թ. թիվ 4.1 կետով կայացված «Ագարակ» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի՝ ի լրումն ԳԲԽ-98/16 բողոքի 23.09.2016թ. ներկայացրած՝ Գնահատող հանձնաժողովի 08.09.2016թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գոռ Գրիգորյան**

Անդամ՝ **Արայիկ Մնացականյան**